պառկեց, որ մատղէր։ Դանակ քաշեց, որ մատղէր, Սանասար Թագաւորին տուեց, շրջեց Էնդեղ, Թագաւորին իրան մարդերով կապեց, տախտակ անցրուց գլխով, ճրագ գլխի վրայ վառեց, կարմիր գինին աչքի յառաջ խմեց։ Էնդուր մարդիկ ձէն քցին քաղաք, ասկեար ժողվեցին, էկան։ Սանասար ասաց. «Ա՛յ վա՜յ, ա՛յ վա՜յ, էսոնք էղնին բամբակ, ես էղնիմ կրակ, էսոնք չեմ կարայ վառի. էստոնք էղնին կրակ, ես ջիւր, չեմ կարայ անցընի»։

Ձին ասաց. «Ինչի՞ կ'վախանաս, քեռ Աստուած կանչի, քանի դիւ քեռ Կէծական թրով սպանիս, ես էնքան իմ պուչով կ'սպանիմ. ինչքան դիւ Կէծական թրով սպանիս, էնքան ես իմ նափասով կ'սպանիմ. ինչքան դիւ Կէծական թրով սպանիս, էնքան ես իմ ոտով կ'սպանիմ. ինչի՞ կ'վախանաս»։

Սանասար ուր Աստուած կանչեց, գնաց քեռսայ վարդապետի մօտ, Էնդեղ խոստովանաւ, մասն առաւ. Աստծոյ հրամանով ինկաւ ասկեարի մէջ, մէկ-երկու դիր կան էկաւ, էնենց փրթեց, ինչպէս ձին կտրի ուր դարին։ Սանասարին քաղաք թագաւոր ընդունեց։ Խաբար գնաց ուր քեռուն. քեռին ասաց. «Ա՜յ Աստուած, որ էն տղէք տեսնի, թող իմ հոգին առնէր»։

Շատ հէյվէ[1]) արեց, չգնաց, մէր խրատեց՝ գնաց։ Սանասար Բաղդասարին ասաց. «Ես կ'երթամ, թագաւորին չթողաս»։ Գնաց քեռու տուն, ձին դռնով չ'ընցաւ. մէ գուրզ տուեց, մէ բուրջ փլցրեց, ձին ներս քաշեց. շատ խոսքի ընկաւ, մոռացաւ ուր տուն։

Թագաւոր համոզեց Բաղդասարին. «Ինձ թող, էթանք Սև սար, վերու օչխար, վերու տաւար կայ, մեզ համար էնդեղ քէֆ կ'անենք, չև քեռ աղբէր կեայ»։

Բաղդասարին խաբեցին, եօթ տարուան գինին կապեցին գլուխ. որ մէկին թաս գինի տուեցին, ասաց. «Խաղար բարին Բաղդասարին»։

Ասաց. «Ձեր խաղար կտրուի, լցրէք տաշտեր, ես խմեմ»։

---

[1]) Խնդրեց, աղաչեց։